ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԽՈՍՈՒՄ ԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ

Ինչպես արվեստագետների, գիտնականների, հասարակական-քաղաքական գործիչների, գրողների, այնպես էլ մտավորական հոգևորականների և Կաթողիկոսներից յուրաքանչյուրի կյանքն ու գործունեությունը, հետաքրքրասիրությունների աշխարհը, կյանքի, մարդկանց նկատմամբ հայացքները յուրովի ներկայացվել են ստեղծագործությունների, ինքնակենսագրական հուշերի և հատկապես գրած նամակների մեջ: Թերևս նամակներում է անկաշկանդ ձևով դրսևորվել ու բացահայտվել նրանց ապրած կյանքը, ապագայի իղձերը, ցանկությունները, երազներն ու տվայտանքները: Երբեմն նամակները եղել են անձնական, իսկ մեծ մասամբ՝ ազգային-հայրենասիրական և հաճախ համամարդկային բնույթի: ՀՀ պետական կենտրոնական արխիվում, որը մեր հանրապետության կարևոր օջախներից մեկն է, հանգրվանել են հայ ժողովրդի ազնվագույն մտավորականների նամակները՝ Կոմիտաս, Արշակ Չոպանյան, Գրիգոր Զոհրապ, Սիամանթո, Դանիել Վարուժան... Գուրգուրանքով, մեծ հոգատարությամբ պահպանվում են նաև եկեղեցական մտավորականների անձնական արխիվները՝ Խրիմյան Հայրիկ Կաթողիկոս, Գարեգին Հովսեփյան Կաթողիկոս, Մաղաքիա Օրմանյան Պատրիարք, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան...

Արխիվում խնամքով պահպանվում են նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի թղթակցությունները սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչ, հայագետ-գիտնական, հայրենասեր Հայկ Բերբերյանի հետ: Նամակներին ծանոթանալու և ուսումնասիրելու համար դրանք սիրով մեզ տրամադրեց ՀՀ արվեստի, գրականության և մամուլի արխիվի տնօրեն Սանդրո Բեհբուդյանը: Նրանց միջև նամակագրությունը հաստատվել է 1957 թ., երբ Գարեգին Սարգսյանը երիտասարդ աբեղա, դեռևս ոչ այնքան հայտնի հոգևորական էր, Օքսֆորդի համալսարանի ուսանող, իսկ Հայկ Բերբերյանը՝ հայտնի, ճանաչված, ծանրակշիռ վաստակով մտավորական: Այդ վավերաթղթերը փայլուն վկայություններ են նրանց սրտամոտ, ջերմ, անխախտ բարեկամության:

Մեծանուն արվեստագետի և Սարգսյան հոգևորականի նամակ-պատասխանները գրքի, գրականության, արվեստի, կրոնի, պատմության, ազգային ցավոտ խնդիրներին վերաբերող հարցեր են շոշափում: Այդ նամակները հստակ պատկերացում են տալիս Կաթողիկոսի կյանքի, հայրենասիրական հայացքների, գրական-գեղարվեստական գործունեության մասին: Բերբերյան գիտնականը ողջունել և բարձր է գնահատել երիտասարդ վարդապետի ուսումնասիրությունները, պրպտումները մատենագրության ասպարեզում: Ասածիս ապացույցն է Հայկ Բերբերյանի նամակներից մեկը, որտեղ ասվում է. «Շնորհակալությամբ ստացայ Հայ քրիստոնեական գրականության մասին ձեր հրատարակած գրքույկը, որ հակառակ իր փոքր ծավալին, շատ բան կը պարունակէ եւ կարեւոր

նպաստ մըն է մեր մատենագրութեան ուսումնասիրութեան ասպարէզում: Անկեղծօրէն կը շնորհաւորեմ ձեզ այս աշխատանքին համար... «Օրիենթասիոն էքիումենիքի» մեջ 1958-ին յօդուած մը հրատարակած էք եղեր: Կարելի՞ է արդեօք օրինակ մը ունենալ»:Թերևս մի գրախոսականի անկեղծ ու ճշգրիտ գնահատական էր այս հակիրճ բնութագրումը:

Նման խոստովանությունները օգնել են ինչպես մեծ գիտնականին, այնպես էլ երիտասարդ հոգևորականին ավելի ճշգրիտ արժևորել կատարած գործի կշիռը և չափը: Այս մասին են վկայում Գարեգին վարդապետ Սարգսյանի նամակներից մեկի հետևյալ տողերը. «Ստացայ խորին շնորհակալութեամբ Ձեր հրատարակած «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետին», որուն մասին արդեն խօսիլ էիք ինձի և նախապորձերին ալ տեսնելու առիթ ունեցած էի ձեր մօտ: Ուշադրութեամբ կարդացի և արդեն իսկ պատրաստեցի գրախօսական մը, որ արդեն իսկ լոյս կը տեսնէ ի մօտոյ «Հասկ»-ին մէջ: Գիտական պրպտումի և խղճմիտ աշխատանքի աղուոր նմոյշ մըն է անկախաբար իր նիւթին արժէքէն, իբրև մեթոդ ունի գիտական լուրջ հանգամանք և արժէք... Շատ շնորհակալ եմ անգլերէն գրքոյկիս մասին Ձեր յայտնած գնահատական դատաստանին համար, որ ինձի համար լուրջ և արժէքաւոր վկայութիւն է»:

Ընդգրկուն բացատրական փոխադարձ նամակագրական երկխոսություն է ընթացել՝ կապված Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի ամբողջական երկերի հրատարակությանը վերաբերող մանրամասներին: Ահա ինչ է գրում Գարեգին վարդապետ Սարգսյանը. «Երկար լռութենէ մը ետք որոշ կարօտի և ուրախութեան զգացումով մը կը գրեմ այս տողերը գիտական գործունէութեան հաճելի հեռանկարով մը և միշտ նոյն բարեկամութեան զգացումին մէջ: Գալուստ Կիւլպէնկեան հաստատութիւնը մեծապէս գնահատելի գաղափարն է ունեցած հրատարակելու հայագիտական ամբողջական երկերը մեծանուն Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի»: Պր. Ռոպէր Կիւլպէնկեան խնդրեց, որ ես ստանձնեմ հրատարակութեան գործին պատասխանատուութիւնը: Սիրով ընդառաջեցի խորհելով, որ իբրեւ նախկին աշակերտ Գարեգին Կաթողիկոսի, սիրոյ պարտք մըն էր նաեւ ինձի աշխատիլ իր յիշատակի պանծացումին ի խնդիր և միանգամայն փոքրիկ ծառայութիւն մը բերել հայագիտական ուսմանց, որոնք այնքան մօտիկ են սրտիս և որմէ այլազան զբաղումներ զիս այնքան հեռու կը պահեն»:

Նամակի ընթերցումից մեր առջև հառնում է իսկական մտավորականը, հայրենասեր ազգային գործիչը, որի կյանքը նվիրում է եղել Եկեղեցուն, ժողովրդին, հայրենիքին: Նամակներում պր. Բերբերյանին մանրամասն հաղորդում է, թե ինչպիսի բարեխղճությամբ, մանրակրկիտ ուսումնասիրությամբ, առանձին գիտնականների հետ խորհրդակցելով է հրատարակել ձեռագրագետ, պատմաբան, բանասեր գիտնականի երկերի ժողովածուն: Այդ ամենը հաստատում է 1969 թ. սեպտեմբերի 21-ին տիար Հայկ Բերբերյանին գրած նամակում. «Շատ մօտիկ բարեկամներէն փրոֆ. Լ. Խաչիկեանը, որ մեծապէս հրճուեցաւ երբ իմացաւ, որ մօտ ատենէն լոյս կը տեսնէ Գարեգին Կաթողիկոսի ամբողջական երկերու Ա. հատորը: Իր գրասենեակին մէջ աչքէ անցուցի Գարեգին Կաթողիկոսի արխիւին ցուցակը: Հետաքրքրական նիւթեր կան այնտեղ ըստ երևոյթին: Դժբախտաբար միայն հինգ-վեց օր մնացի Հայաստան և այնքան զբաղած եղայ Էջմիածնի մէջ, որ անկարելի եղաւ ինձի աւելի երկար մնալ Մատենադարան և աչքի անցնիլ

արխիւը»: Կարժէ սակայն առիթով մը երթալ և շուրջ մէկ ամիս մնալով ուսումնասիրել այդ արխիւը և տեսնել թէ ի՞նչ նորութիւններ կարելի է գտնել անոնց մէջ»: Վարձատրված է Գարեգին վարդապետը, քանզի վավերագրերի ցանկում պահպանվում է նաև հաղորդում, որ «Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութիւնը իր խորին շնորհակալիքը կը յայտնէ Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Սարգիսեանին ամբողջական երկերուն պատրաստութեան բազմապահանջ եւ պատասխանատու հոգը» ստանձնելու համար:

Գարեգին եպիսկոպոս Սարգսյանի պրպտող միտքը չէր կարող սահմանափակվել միայն այս գրքերի հրատարակությամբ, և նա ձեռնամուխ է լինում նաև Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի հոդվածների ժողովածուն հրատարակելուն: Ահա ինչ է խոստովանում նա 1962 թ. փետրվարի 26-ին ուղարկած նամակում. «Երբ Թաւրիզ էի, ուր Կարապետ Տէր Մկրտչեան սրբազանի յիշատակը այնքան կենդանի է, գաղափար ունեցայ «Արարատի» մէջ իր հրատարակած յօդուածները ի մի խմբելու և բացատրողական յառաջաբանով մը հրատարակելու»: Գարեգին Սարգսյան մտավորականի աշխատասիրությամբ և առաջաբանով Անթիլիասում հրատարակվեց Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի ոգեղեն հոդվածների ժողովածուն: Իսկ այդ օրերին հրատարակված իր աշխատության մասին համեստաբար գրում է. «Անցնող տարւոյն վերջաւորութեան, անգլերէն լեզուով գրքոյկ մը հրատարակեցի Արևելեան Եկեղեցիներու մասին. փոստի միջոցաւ կ'ուղարկեմ Ձեզի օրինակ մը»:

Նամակները վկայում են, թե ինչպիսի բարեկամական հարաբերություններ են եղել հայ ժողովրդի անվանի մտավորականների, օտարազգի հայագետների հետ՝ պրոֆ. Վահե Սեթեյան, Պաուրա, Շահնուր, Հ. Միյլտեմանս, Ս. Քոլանջյան, Սիրարփի Տեր-Ներսեսյան և այլն: Մեկ անգամ ևս համոզվում և հստակ պատկերացում ես կազմում, թե որքան կարևոր և ազգանվեր գործունեություն է կատարել ի նպաստ հայ ժողովրդի և Հայոց Եկեղեցու միջազգային հեղինակությանը, երբ ծանոթանում ես նամակների այն բաժնին, որոնք պատմում են աշխարհի տարբեր տեղերում /Հնդկաստան, Ժնև, Փարիզ/ հրավիրված գիտաժողովների, խորհրդակցությունների մասին: Հետաքրքիր է նաև Բերբերյանի նամակը՝ հասցեագրված Գարեգին եպիսկոպոսին. «Օտար հայագետներու Օքսֆորտ ժամանումէ օգտուելով, պիտի խնդրէի, որ անոնց հրատարակուած կամ պատրաստութեան մէջ գտնուող գործերուն ցանկը պատրաստել տայիք իրենց: Մինչեւ այսօր յստակ գաղափար մը չունիմ թէ Տրիսսը ինչ պատրաստելու վրայ է»:

Պահպանված այս նամակները մեկ անգամ ևս հավաստում են, որ Նորին Սրբությունը վարչական, հոգևոր-եկեղեցական անվերապահ ծառայությամբ կարևոր դեր է կատարել նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում նոր սերնդի դաստիարակության գործում. «Դժբախտաբար այնքան ծանրաբեռնուած եմ դասերով և տեսչական գործերով, որ գրեթէ երբեք առիթ չեմ ունենար մասնաւոր ուսումնասիրութիւններ կատարելու: Շաբաթական 22 պահ դասաւանդութիւն ունիմ: 18-ը՝ Դպրեվանքի ընծայարանի սարկաւագներուն և 4-ը՝ ճեմարանական լսարանական բաժնին: Դասերս առհասարակ դասախօսութիւններ են, որոնք կը պահանջեն լուրջ պատրաստութիւն: Կողմնակի վանական պարտաւորութիւններ՝ պատարագներ, քարոզներ, երբեմն հրապարակային դասախօսութիւններ աւելի կը ծանրացնեն զբաղումներս և յաճախ կը ցրուին

ճիգերս: Կը յուսամ մէկ երկու տարիէն կը թեթեւանան դասերս և առիթ կը գտնեմ բանասիրական խորքով ուսումնասիրութիւնների»: Լիովին չիրականացաւ Նորին Սրբության այդ բաղձանքը, քանզի ժողովուրդը գնահատեց հայրենասեր հոգևորականի կազմակերպչական կարողությունները, նախնիներից ժառանգած առաքինի հատկանիշները՝ ջերմեռանդ հավատացյալ, քաջ հովվապետ, կրթանվեր ու հայրենասեր մտավորական, և նրանից պահանջեց շատ ավելի կարևոր մի առաքելություն, հովվել հոտը Ամենայն Հայոց Կաթողիկոսության բարձունքից:

Ուսումնասիրելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի նամակների փոքրիկ մի մասը՝ պիտի ցանկանայինք, որ այն դառնար հասարակության սեփականությունը, որոնցից ամեն մեկը կարող է դիտվել իբրև գրական-գեղարվեստական մի փոքրիկ նմուշ, որոնք բնորոշում են Նորին Սուրբ Օծության հոգու վեհությունը, սրտի ազնվությունն ու մարդասիրությունը: Հրապարակի վրա են մեր մշակույթի, գիտության, գրողների նշանավոր գործիչներից շատերի /Թումանյան, Տերյան, Իսահակյան.../ նամակները, որոնք ազգային և անհատական խնդիրներ արծարծելուց բացի, ընթերցանության սիրված գրքեր են դարձել: Հուսանք, որ մեծանուն հեղինակների շարքում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի նամականին ես կներկայացվի ընթերցողին, որը ոչ միայն գրական, այլև գիտա-մշակութային մեծ արժեք ունի: